

Ց Ա Ն Կ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ 1

ՏՀԶԿ ԲՈՒՆՈՒՄԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ 2

ՏՀԶԿ ՊՐԱՀԱՅԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



**COUNTERPART**  
INTERNATIONAL



**Հայաստանի ներգրավումը  
Տնտեսական համագործակցության եւ զարգացման  
կազմակերպության  
Բոլոնիայի գործընթացին**

Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Բոլոնիայի գործընթացին, որը հանդիսանում է ձեռներեցության զարգացման քաղաքականությանն առնչվող ամենահաջողված միջազգային նախաձեռնություններից մեկը, Հայաստանը դեռեւս ինտեգրված չէ: Սակայն, «Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի» ՓՄՁ շահերի պաշտպանության նախաձեռնության շրջանակներում իրականացվող ջանքերի շնորհիվ, Հայաստանի կառավարությունը (ի դեմս Եվրամիությունում Հայաստանի առևտրի ներկայացուցչի) նախաձեռնել էր բանակցային գործընթաց ՏՀԶԿ համապատասխան պաշտոնյաների հետ, որի արդյունքում Հայաստանը պաշտոնապես կիրավիրվի մասնակցելու ՏՀԶԿ Բոլոնիայի գործընթացի շրջանակներում նախատեսվող հաջորդ բարձր մակարդակի միջոցառումներին:

Համաձայն շահերի պաշտպանության իր ռազմավարությանը, Հիմնադրամը իրականացնում է ՓՄՁ ոլորտում միջազգային քաղաքականության մասին հիմնական շահագրգիռ կողմերին տեղեկատվության տրամադրմանն ուղղված գործունեություն, ինչպես նաև օժանդակում է Հայաստանի Կառավարությանը ՓՄՁ զարգացման միջազգային նախաձեռնություններին, մասնավորապես ՏՀԶԿ Բոլոնիայի գործընթացին ինտեգրվելու հարցում (Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ հիմնական նյութերի հավաքագրում և ուսումնասիրություն, Բոլոնիայի գործընթացի քաղաքականության, սկզբունքների և Հայաստանի ներկայիս ՓՄՁ զարգացման համազգային ռազմավարության համեմատական, ՓՄՁ զարգացման այս միջազգային ձևաչափին ինտեգրվելու անհրաժեշտության և առավելությունների վերլուծություն, Կառավարությանը ՓՄՁ քաղաքականության վերաբերյալ իրատեսական և կիրառելի առաջարկությունների ներկայացում):

**Տնտեսական համագործակցության եւ զարգացման  
կազմակերպության (ՏՀԶԿ)  
Բոլոնիայի գործընթացը**



Գործընթացը սկիզբ է առել 2000թ. հունիսին Իտալիայի Բոլոնիա քաղաքում՝ «Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության» եւ Իտալիայի կառավարության

կողմից կազմակերպված «ՓՄՁ-երի մրցունակության բարձրացումը համաշխարհային տնտեսության մեջ. ռազմավարություն եւ քաղաքականություն» թեմայով միջազգային համաժողովում: Բոլոնիայի գործընթացը մեխանիզմ է ուղղված համաշխարհային մակարդակով ձեռնարկատիրության օրակարգի ձեւավորմանն ու ՓՄՁ քաղաքականության զարգացմանը: Այն ներկայումս

ներառում է շուրջ 80 երկրներ եւ ուղղված է օժանդակելու կառավարություններին՝ աջակցելու ձեռնարկատերերին եւ ՓՄՁ-երին դիմակայելու մարտահրավերներին եւ օգտվելու գլոբալիզացիայի առավելություններից:

«Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության» ՓՄՁ-ների համար պատասխանատու նախարարների մասնակցությամբ 1-ին համաժողովի ընթացքում ընդունվեց «ՓՄՁ քաղաքականության Բոլոնիայի կանոնադրությունը» (The Bologna Charter on SME Policies): Մասնակիցները որոշեցին Բոլոնիայի համաժողովը համարել ՏՀԶԿ անդամ և ոչ անդամ երկրների տնտեսական քաղաքականությանն առնչվող երկխոսության սկիզբը, որը պետք է հաջորդվի առաջընթացի շարունակական մոնիտորինգով և Բոլոնիայի կանոնադրության մշակմամբ ու կիրառմամբ: Այս երկխոսությունը և մոնիտորինգը հետագայում հայտնի են դարձել «ՏՀԶԿ Բոլոնիայի գործընթաց» անվանմամբ:

Երկրորդ համաժողովը, որը տեղի է ունեցել 2004թ. Ստամբուլում՝ Թուրքիայի արդյունաբերության և առևտրի նախարարության օժանդակությամբ, հնարավորություն է տվել գնահատել գլոբալիզացիային առնչվող նոր զարգացումների ազդեցությունը ՓՄՁ-ների վրա: Համաժողովի վերջում նախարարներն ընդունել են նորարարական եւ միջազգայնորեն մրցունակ ՓՄՁ-երի զարգացման խթանման վերաբերյալ Ստամբուլի նախարարական Հռչակագիրը:

Ստամբուլի համաժողովից հետո ՏՀԶԿ ՓՄՁ-երի և ձեռնարկատիրության հարցերով «Աշխատանքային խումբը մշակեց քաղաքականությանն առնչվող որոշակի հարորդագրություններ և առաջարկություններ:

2007թ. մայիսի 31-ից հունիսի 1-ը Տոկիոյում տեղի է ունեցել ՏՀԶԿ երրորդ համաժողովը, որը նվիրված էր գլոբալ արժեշոքներում ՓՄՁ-երի դերի ընդլայնմանը: Համաժողովին ներգրավվել էին տարբեր երկրների փորձագետներ, միջազգային կազմակերպություններ, ակադեմիկներ, բիզնեսի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ՝ վերանայելու ուսումնասիրության արդյունքները, ուսումնասիրելու քաղաքականության լավագույն փորձը և ծրագրերը, ինչպես նաև մշակելու Տոկիոյի Գործողությունների Հայտարարությունը՝ ներառյալ քաղաքականության վերաբերյալ այն առաջարկությունները, որոնք անհրաժեշտ են այս ասպարեզում հետագա առաջնության համար:

[Հարակից հղումներ](#)



**Նախարարական համաժողով՝ նվիրված Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրների ձեռնարկատիրությունների և մրցունակության քաղաքականությանը**  
**Պրահա, 15-17 հունիսի, 2011թ.**



Նախարարական համաժողովն ուղղված էր Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրներում փոքր և միջին ձեռնարկատիրության մրցունակության բարելավմանը:

Նախարարական համաժողովին մասնակցում էին Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Սլովակիա, Ռուսաստան) էկոնոմիկայի նախարարները, ինչպես նաև ՏՀԶԿ (OECD) երկրներից քաղաքականություն մշակողներ ու բարձր մակարդակի ներկայացուցիչներ՝ քննարկելու ներդրումային, մրցունակության և ՓՄՁ-ների զարգացման մարտահրավերները իրենց երկրներում: Ծրագիրն իրականացվել է Եվրամիության Արևելյան գործընկերության հետ փոխհամաձայնեցված:



Այս առիթով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության(OECD) և Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի(EESC) տարածաշրջանի նախարարները մեկնարկել են արևելյան Եվրոպայի և հարավային Կովկասի մրցունակության նոր «Հեռանկարը», որը ուսումնասիրում է մարդկային կապիտալի, ՓՄՁ-ների համար Ֆինանսների հասանելիության բարելավման, ավելի լավ ներդրումային հնարավորությունների ստեղծման միջոցով տարածաշրջանի երկրներում մրցունակության բարձրացմանն ուղղված հիմնական քաղաքականությունները:

Սա իրենից ներկայացնում է ՏՀԶԿ - Եվրասիա մրցունակության ավելի ընդգրկուն ծրագրի երկրորդ «Հեռանկարը» և ներառում է արևելյան Եվրոպայի և հարավային Կովկասի վերոնշյալ 6 երկրները և 7 երկրներ՝ Կենտրոնական Ասիայից (Աֆղանստան, Ղազախստան, Ղրղստան, Մոնղոլիա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան):

Համաժողովի ընթացքում հռչակվել է Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրներում ՓՄՁ-երի, ձեռնարկատիրության և մրցունակության զարգացման **Հռչակագիրը**, որն ընդունվել է հունիսի 16-ին կայացած կլոր սեղանի քննարկումների ժամանակ:

Հռչակագիրը նաև վերահաստատել է տարածաշրջանի քաղաքական նախաձեռնությունը՝ «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության» հետ համատեղ նպաստել ՓՄՁ-ների և ձեռներեցության աջակցման նպատակային քաղաքականության զարգացմանը:

Համաժողովին մասնակցել է նաև Հայաստանի պատվիրակությունը (էկոնոմիկայի փոխնախարար Գարեգին Մելքոնյանը, Եվրամիության հետ համագործակցության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արթուր Մայսուրյանը):

**Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Եվրասիա  
մրցունակության ծրագիրը**



Եվրասիա մրցունակության ծրագիրը տարածաշրջանային ծրագիր է, որը աջակցում է Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի և Ուկրաինայի տնտեսական աճին և քաղաքական կայունությանը՝ կարողությունների զարգացման և գործարար միջավայրի բարելավմանն ուղղված բարեփոխումներն արագացնելու միջոցով: 2008թ.-ից Եվրասիա մրցունակության ծրագիրը օժանդակում է տնտեսական բարեփոխումների արագացմանը և գործարար միջավայրի բարելավմանը, հասնելու կայուն տնտեսական աճի և զբաղվածության մակարդակի բարձրացման երկու տարածաշրջանում՝ Կենտրոնական Ասիայի, Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրներում:

ՏՀԶԿ - Եվրասիա մրցունակության ծրագիրը միավորում է ՏՀԶԿ-ն, կառավարությունները և մասնավոր հատվածը մի համապարփակ մոտեցմամբ, որը ներառում է տարածաշրջանային երկխոսությունը, շահագրգիռ կողմերի քննարկումները, բարեփոխումների գերակայությունների սահմանումն ու իրականացման աջակցությունը:

Տարածաշրջանային մոտեցումը հնարավորություն է տալիս սահմանել գերակայություններ: ՓՄՁ-երը այլ տարածաշրջանի իրենց գործընկերներից սովորում են, թե ինչպես նախագծել հաջող կառույց, մշակել և իրականացնել հաջող քաղաքականություն: ՏՀԶԿ-ն նաև օժանդակում է երկրներին, գործարար միջավայրի և տվյալ ճյուղին հատուկ ռազմավարությունների միջոցով իրականացնելու բարեփոխումներ՝ համաձայն իրենց առաջնահերթությունների:

*Ծրագիրը նպատակ ունի.*

- տարածաշրջանային ներդրումային միջավայրի քաղաքականության օրակարգում հասնել քաղաքական օժանդակության,
- մշակել ազգային ներդրումային քաղաքականություն՝ համաձայն որի որոշվում են ներդրումային միջավայրի առաջնահերթությունները և խրախուսվում որոշակի բարեփոխումներ,
- օժանդակել բարեփոխումների իրականացմանը,
- խրախուսել երկրներին միանալ միջազգային ներդրումների վերաբերյալ ՏՀԶԿ Հռչակագրին և գնալ դեպի ՏՀԶԿ և ԵՄ չափանիշների համապատասխանեցման,
- մեծացնել տարածաշրջանային առաջնահերթությունների թափանցիկությունը, ինչպիսիք են փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսների հասանելիությունը և կորպորատիվ կառավարումը:

**«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի»**

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**որոնք մշակվել են**

**ԵԱՀԿ նախարարական համաժողովին ներկայացնելու նպատակով**

Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը, հենվելով իր կողմից իրականացված հետազոտական և վերլուծական աշխատանքների վրա, մշակել է ՓՄՁ ոլորտի քաղաքականությանն առնչվող առաջարկությունների շարք, որոք ուղղված են երկրի և տարածաշրջանի տնտեսական զարգացման

համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, ՓՄՁ զարգացման իրական կարիքներից բխող քաղաքականության և վարչարարության սկզբունքների մշակմանն ու կիրառմանը:

Առաջարկությունների փաթեթը, նախապես բազմաթիվ շահառուների, գործընկեր կազմակերպությունների, գործարար հանրության ներկայացուցիչների հետ քննարկվելուց հետո, «Բոլոնիայի գործընթացի» նյութերի հետ միասին ներկայացվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն:

1. Պետության և մասնավոր հատվածի միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորման նպատակով զարգացնել պետական-մասնավոր կառուցողական գործընկերությունը,

2. Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված բարեփոխումները նախաձեռնելու, իրականացնելու, ինչպես նաև դրանց ընթացքը վերահսկելու և արդյունքները գնահատելու նպատակով ապահովել կայուն և շարունակական երկխոսություն մասնավոր հատվածի հետ,

3. Մատչելի և դյուրին դարձնել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը ՓՄՁ ոլորտի համար,

4. Մրցակցության արդար պայմանների ապահովման և տնտեսական հանգուցային ոլորտների ազատականացման միջոցով խթանել ՓՄՁ ոլորտի զարգացումը,

5. Խրախուսել «կանաչ» գործարարության զարգացումը ՓՄՁ ոլորտում:

**Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ**  
Հունիս, 2011թ.